պատկերն են ներկայացնում։ Երբ ես Պարսկաստանի հիւսիսային սահմանները չէի պտտել, հարցնում էի ինք իրենս, երբ այդ ողորմելիներին տեսնում էի, բաց օդումը թաւալած, կամ անխնամ պատի տակին մեռնելիս, ի՞նչ է ստիպում այդ մարդոց թողնել տուն, տեղ հայրենիք, եթէ ներելի է դրանց ունենալ սիրելիք, ամբողջ օրը տանջվել ծանր աշխատութեան տակ, ամբողջ գիշեր տանջվել անպատսպարան բաց օդումը և ջերմախտից, կամ ուրիշ հիւանդութիւններից բռնված անդարման ճանճերի պէս մեռնել պատերի տակ։ Չէ՞ որ դրանք անկախ ազգի որդիք են, ներկայ ունեն, թագաւորութիւն ունեն, ազգային ինքնասիրութեան պարծանքի համար, բայց Մագուայ գիւղերը տեսնելից զկնի խնդիրը պարզվեց։

Արդարև չնայեած, որ ազգային ինքնասիրութեան առարկայ կայ, ներկայ կայ, բայց թաթարը բախտաւոր է համարում ինք զինք, որ Ռուսաստանումն է օդ ծծում, գոնէ այդտեղ նորա փորը կշտանում է, գոնէ նա ազատ է բաց օդի մթնոլորտի տակ։ Նրան ոչ ոք չի ստիպում, որ իւրը դեռ ծարաւ, գնա խանի էշը ջրի, կամ ամբողջ տարին չարչարվի, տիրողներին կերակրի, ինքը և իւր ընտանիքը սոված տկլոր մնան։

Մի քանի գիւղերում, ուր ես իջևանեցի ուտելու ոչինչ չ'գտայ, այստեղ յիշում եմ Եօլագեալդի